

Ա. ՂԱՐԻԲՅԱՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Առանձնատիպ Հայկական ՄՄԲ Գիտությունների Ակադեմիայի  
«Տեղեկագրի» 1948 թ. № 1-ից



Խոշոր աշխատավոր Հ. Կ. Հայոց աշխատավոր

Ա. Վարդիկյան

3/11/78

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի թղթակից անդամ

## ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱԳԻՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ<sup>1</sup>

«Հնդկաբական լեզվաբանությունը — զա արյուն է արյունից, ոսկը է ոսկից մեռնող բուքժուական հասարակայնության, որ կառուցված է եվրոպացիների կողմից իրենց գաղութային քաղաքականությամբ արևելյան ժողովուրդներին ճնշելու վրա»:<sup>2</sup>


«Հնդկաբական լեզվաբանությունը մարդկային խմբավորումների՝ կրոնական հիմքերի վրա կատարված ստորաբաժնումը փոխարինեց լեզվաբանականով, առանձնացրեց լեզվուների հնդկաբական շրջանը և նվիրվեց հնդկաբական ժողովուրդների առանձին ուսումնասիրության խորացմանը... նա զավանող աստվածաբանության ունեցած հայացքը ընտրյալ ցեղերի նկատմամբ տեղափոխեց նրանց՝ հնդկաբական ժողովուրդների, հնդկաբական ռասայի վրա, որ իր տարբերակներով լցրել էր ամրող աշխարհներ»:<sup>3</sup>

Այս խոսքերով ասված է ամեն ինչ. հնդկաբական լեզվաբանությունն ստացել է իր արժանի գնահատականը: Հնդկաբական լեզվաբանությունը 19-րդ դարի հորինվածք է, բուքժուական իդեալիստական փիլիսոփայության սկզբունքների վրա կառուցած մի գիտություն, ուստի նրա տեսական հիմունքները, անվերապահորեն տասած, իդեալիստական են և բազմաթիվ ինսդիրներում հար և նման ու զուգահեռ աստվածաբանության: Դա լոկ մեղադրանք չէ և ոչ մերկախոս վիրավորանք, այլ ուսալ վիճակից ենող կարծիք: Աստվածաբանության կողմից ընդունված Ազամի լեզվի տեղ հնդկաբական աստվածաբանությունը գնում է նախամայր լեզուն կամ նախամայր լեզուների նախամայրը: Բարելոնի աշտարակաշինության ժամանակ լեզուների բաժանման աստվածաբանական տեսության տեղը բուքժուական գիտությունը գնում է լեզուների անջատումն ու բաժանումը նախամայր յեղից: Աստծու ընտրյալ ժողովրդի և արհամարնված կամ երկրորդական ժողովուրդների՝ աստվածաբանական տեսության փոխարեն այդ գիտությունը գնում է հնդկաբական համարվող բարձր ռասան ի տարբերություն մարդկային մյուս հատվածներից, որոնք համարվում են ավելի ստորագուստական ամափանամության կողմից երեսույթների կանխորշվածության տեսության տեղը այդ գիտությունը գնում է ռասայի լեզվի անխառնության և հնչյունական փոփոխությունների կույր, կանխորշված կարգով սահմանված օրենքները և այլն, և այլն:

<sup>1</sup> Զեկուցված է Հայկական ՍՍՌ Գ.Ա. 1947 թվի հորելյանական սեսիայի նոյեմբերի 26-ի նիստում:

<sup>2</sup> H. Я. Margr—Избранные работы, т. 1, стр. 222.

<sup>3</sup> Ibid., стр. 92.



Հնդկվըռպարանությունը իր ծաղկուն շրջանն ապրել է 19-րդ դարում, 20-րդ դարի նրա ներկայացուցիչները ոչինչ չեն ավելացրել նրա տեսական հիմունքների վրա, այլ միայն 20-րդ դարի պրոգրեսիվ հայացքների տակ մերկացող նրա սկզբունքները փորձել են քողարկել, սքողել կամ հարմարեցնել գիտական նոր իրադրությանը՝ Այսպես, օրինակ, հայտնի լեզվարան Մեյիեյի աշակերտը՝ Վանդղինսը, ուզում է մեզ հավատացնել, թե «որ լեզու մյուսից չի ծնվում...»<sup>1</sup>, բայց երկար դեռ ու դեն ընկնելուց հետո եղարկացնում է. «...բարեխտաբար լեզուների մեծ մասի աղքակցությունը... որոշված է մեծագույն ճշուությամբ»:<sup>2</sup> Պարզ է, որ հնդկվրոպարանության այժմյան կորիքինը նեղ տեղն է ընկել անլուծելի հակասության մեջ, որից դուրս դալու նաև ի վիճակի չէ: Ուստի և տերտերականությունը շարունակում է մնալ հնդկվրոպարանության հիմնական հատկանիշը, նրա երրորդականությանը՝ մուսական համար առաջարկությունը:

Նույն 19-րդ դարի կեսի մոտերքը առաջացավ պրոլետարիատի վիլիսոփայական գիտությունը՝ մարքսիզմը: Այդ գիտությունը չեր հանդիսանում մի տեսակ շարունակությունը փիլիսոփայության ողջ պատմության, այլ դա գիտական ուսուցչիա էր՝ հիմնված մեծ հայտնագործության վրա, հայտնագործություն, որ իր նշանակությամբ գերազանցում էր բոլոր տիպի ու տեսակի հայտնագործություններին: Այդ հայտնագործությունը պատմական մատերիալիզմի օրենքներն էին, որով գիտական մաքի առաջ պարզվում էին մարդկության պատմության զարգացման ճշմարիտ օրինաչափությունները: Այդ փիլիսոփայության՝ մարքսիզմի փիլիսոփայության լույսի տակ մարդկային հասարակության պատմությունը երևաց իր իսկական պատկերով: Ի թիվս բազմաթիվ այլ հարցերի նաև պարզվեց, որ մարդկային հասարակական միավորումները, որոնք ընդունում են տոհմի, ցեղի, ժողովրդի, ազգի ձևեր, պատմական կատեգորիաներ են՝ որոշ ժամանակաշրջանում առաջացած, և վրանց առաջացման որոշող պատճառը արտադրողական ուժերի զարգացման այս կամ այն աստիճանն է: Հասարակական միավորը՝ ցեղ, տոհմ, ժողովուրդ, ազգ, ունենում են հասարակական ծնունդ, հասարակական կյանք և հասարակական մահ, որոնք պայմանավորված են արտադրողական ուժերի զարգացման որոշ աստիճանով, այդ ուժերի մեջ առաջացած որակական փոփոխություններով, որոնք բարձրացնում են հասարակությունը զարգացման նոր աստիճանի վրա, որ և բերում է հին հասարակության մահը և նորի ծնունդը: Այսպիսով մարդկությունը ռասայնորեն և բիոլոգիորեն իրեն կենդանի, իրեն մարդ նաև ապրում է հասարակականորեն: Հասարակակարգի կործանումը մարդկության կործանում չէ: հին հասարակությունը կործանվեց, բայց մարդկությունը ապրեց նոր էտապի կյանքով, ֆեոդալական հասարակությունը կործանվեց, մահացավ, բայց մարդկությունը ապրեց նոր վերելքի հասարակության կյանքով, բուրժուատական հասարակության կյանքով, բուրժուատական հասարակությունը կործանվում է արդեն և հեռու չէ այն օրը, եթե նա վերջնականապես

<sup>1</sup> Վանդրոս—Յանկ, стр. 271.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 283:

կկործանվիր ամբողջ աշխարհում, բայց մարդկությունը դրանով չի կործանվում, այլ ապրում է նոր վերելքի հասարակական կյանքով, ավելի կատարյալ, ավելի զարգացած՝ կոմունիստական հասարակական կյանքով։ Այսպիսի հայտնագործություն կատարեց մարդկությունը մարդկային հասարակության պատմության մեջ։ Դասակարգային հասարակության ճիրաններում տառապող մարդկության համար մարդքի զմբ մի պայծառ արեգակ էր, որ բարձրացավ նրա պատմության երկնակամարդի վրա՝ նրա ցըտաշունչ կյանքի ու տառապանքի օրերին։ Այդ պայծառ լույսի տակ չքացան ու շարունակում են չքանալ մարդու զիտակցության վրա ճնշող բոլոր մութ ու տերսերական տեսությունները, մարդատեցությամբ լի դաժան շահագործական հարաբերությունները հիմնավորող, մարդկության արժանապատվությունը ստորացնող, մարդկության հատվածները միմյանց դիմ թշնամի գարձնող բոլոր տեսական, փիլիսոփայական, պատմական և այլ սկզբունքները։

Պարզ չէ, որ այս պայծառ լույսի տակ պետք է որ մերկանար նաև հնդկվրոպարանությունը իբրև ուսայական ուսակցիոն տեսություն, իբրև պատմության զարգացման ընթացքը հակագիտական եղանակով պատկերող տեսություն, պատմության զարգացման ընթացքը զիմի վրա դնող սկզբունքներ մշակող տեսություն։

Մինչ մարքսիզմը փիլիսոփայական բոլոր ուղղությունները գործում էին մեկնել, բացատրել հասարակական և ընդունական կյանքի երևությունները, հիմնավորել գոյություն ունեցող հարաբերությունները։ Մարքսիզմը նրանով է նաև հայտնագործություն, որ նա ոչ միայն բացատրում է, այլև ցույց է տալիս փոփոխելու ճանապարհը։

Մարքսիզմը պրոլետարական ունվոլուցիայի պրակտիկայում կատարելագործվեց և իբրև տեսություն, և իբրև աշխարհը փոխելու ստրատեգիա և բարձրացավ նոր աստիճանի՝ լինինիզմի աստիճանի վրա։ Մեծ լինինի և Մեծ Ստալինի հանձնարով։ Մարքսիզմը զարձակ կոմունիզմը կառուցելու տեսություն և ստրատեգիա։ Մարքսիզմի 20-րդ դարի պրակտիկան Սովետական Մեծ Միությունն է, մարքսիզմի 20-րդ դարի աստիճանը լինինիզմն է։

Ի հակադրություն հնդկվրոպարանության՝ սովետական լեզվաբանության հիմքում, ինչպես սովետական բոլոր գիտությունների հիմքում ընկած է մարքսիզմ-լինինիզմը։ Սովետական լեզվաբանությունը չէ ու չի կարող լինել հնդկվրոպարանության անընդմիջնորդ շարունակությունը, այլ նա բուրժուական լեզվաբանության՝ հնդկվրոպարանության, անտիպոդն է, նրա հակադրությունը, նրա տեսական հիմունքների բացասաւումը։

Իբր այսպես է դրվում հարցը, ոմանք ցուցաբերում են մտավախություն, թէ չինի՞ մենք ուզում ենք ժխտել հնդկվրոպարանության նվաճումները։ Այս, ժխտում ենք, բայց միայն հնդկվրոպարանության տեսական նվաճումները։

Մարքսիզմին նախորդող շրջանում գիտության պատմությունը շատ խնդիրներ ու հարցեր է շոշափել շատ «նվաճումներ» է ունեցել, սակայն դրանց մեջ մենք պետք է տեսնենք երկու կողմ. մի կողմը, որ մարդկության պրակտիկան է տվել, միլինների և միլիարդների աշխատանքային և մտավոր գործունեությունը, դա կազմում է մարդկության ամեն մի ապահովեկիր 1—2

ըող սերնդի սեփականությունը, և երկրորդը՝ իդեալիստական փիլիսոփայության նվաճումները կազմող նրա ելակետային գրությները, նրա աշխարհըբանման մեջողը—ահա այդ է, որ մարքսիզմը միանգամայն ժըխտում է: Այդպես է և սովետական լեզվաբանությունը հնդեվրոպանության համար:

Սովետական լեզվաբանությունը ունի և կարող է ունենալ միայն ու միմիայն փիլիսոփայական մեկ ելակետ, աշխարհըբանման մեկ մեթոդ, փիլիսոփայության մեկ ուսմունքը. զա մարքսիզմ-լենինիզմն է:

Մարքսիզմը լեզվաբանության մեջ առաջին կիրառողը եղել է սովետական հանձարեղ լեզվաբան ակադեմիկոս Մարք, որը, վերանայելով բուժության լեզվաբանության տեսական հիմունքները, եկավ այն համոզման, որ այդ գիտությունը՝ հնդեվրոպաբանությունը, ուստայիկան տեսության գիտություն է, հակամարքսիստական, ուրեմն և հակապատմական գիտություն, և նրա տեսական հիմունքները բխում են իդեալիստական փիլիսոփայական հիմունքներից: Ահա ինչու Մարք վճռականորեն արտահայտեց իր ժխտողական կարծիքը հնդեվրոպաբանության մասին: Ուրեմն պարզ է, որ որևէ ձևով ընդունելի չէ հնդեվրոպաբանության տեսական սկզբունքների օգտագործումը լեզվաբանական հետազոտությունների համար և պետք է կառուցել լեզվաբանության դիտական հիմունքները, այսինքն՝ մարքսիստական հիմունքները: Եվ Ն. Մարք վճռական շրջադարձ կատարելով՝ մշակեց այդ հիմունքները բատ յուր կտրյաց, որոնք և դարձան սովետական լեզվաբանության նվաճությունը: Ն. Մարք մշտկած լեզվաբանական այդ հիմունքների ամրողությունը կոչվեց «լեզվի նոր ուսմունք», որ հաճախ նաև կրում էր «Հարեթաբարանություն» անունը:

Ի հակագործություն հնդեվրոպաբանության Մարք ընդունեց լեզվի և մասձողության միասնության մարքսիստական թեզը և խոր հետազոտություններով հիմնավորեց այդ թեզը:

Այդ պատճառով էլ Մարք մշակեց ամենից առաջ լեզվի առաջացման հարցը՝ անքակտիվորեն կապելով մտածողության առաջացման հետ: Այս տեղ Մարք կատարեց մի խոշոր գյուտ, որ մեծ նշանակություն է ստանում լեզվաբանական ուսումնասիրությունների համար, առանձնապես լեզվի պատմությունը ուսումնասիրելու համար: Մարք իր հետազոտություններից եղրակացնում է, որ մարդկային մտածողության որակը տարբեր է եղել հոտարակությունների պատմության տարբեր ժամանակաշրջաններում: Նախնական կոմունիստական հասարակական գոյավիճակում մարդկային մտածողության որակը եղել է պրիմիտիվիզմի նախատրամաբանական, իր առանձին տիպի ու տեսակի օրինաչափություններով, արդի տրամաբանական օրինաչափություններից: Որակապն տարբեր Մարքությունը այդ պրիմիտիվ շրջանի օրինաչափությունները որոշվել են մարդկային հասարակության կեցության նախնական բնույթով, որի որոշողն էլ եղել է արտադրողական ուժերի զարգացման պրիմիտիվ աստիճանը: Մարքսիստական այդ գրույթը հանգեցնում է Մարքին, այն եղրակացության, որ մարդկային մտածողության զարգացման պատմությունը տեղի է ունեցել ստադիանում, այսինքն՝ որակական թույլքներով: Ահա մտածողության այդ արբեր ստագիտաները և որոշել են լեզվուների տարբեր տիպերը, հետևաբար լեզուների զարգացման պատմությունը նույնպես պետք է վերցնել ստագիտ

ըմբռնմամբ, այսինքն թե՝ լեզուների զարգացումը տեղի է ունեցել ստադիալ փոփոխություններով, որակական հաջորդական էտապներով, պայմանավորվելով մասնակության զարգացման ստագիաներով։ Դա մի շատ մեծ հայտնագործություն էր և մարդու կամ համարձակ կիրառումը գեղվարանական ուսումնասիրության մեջ։

Մյուս կողմից մարդու այն դրությունը որ հասարակական կյանքի տնտեսական բազան որոշում է նրա իդեոլոգիական ողջ հարաստությունը, որի մեջ արտացոլվում է նա, թելագրում է մարդու ստագիաներով։ Դա մի շատ մեծ հայտնագործություն էր և մարդու կամ համարձակ կիրառումը գեղվարանական կյանքի պրոֆուցիա, ավելի ճիշտ՝ որպես հասարակական իրական գիտակցություն, պրակտիկ գիտակցություն, իսկ այդ սկզբունքը մզում է լեզվաբանին ամենից առաջ որոնելու լեզվի մեջ կատարվող որակական փոփոխությունները և պայմանավորելու այդ փոփոխությունները գիտակցության մեջ կատարվող որակական փոփոխությունը։ Այս գեղվառում լեզվի մեջ կատարվող կամ գիտվող մասնակի փոփոխությունները կամ երեսությունները հիմնավորել որակական օրինաչափություններով իբրև հասարակական գիտակցության օրինաչափությունների գրականություններ։ Այդ ամենը հանգում է վերջին հաշվով լեզվի զարգացման ստագիալականությունը որոշելու պրոբլեմին։

Այսպիսով լեզվաբանությունը դառնում է փիլիսոփայական գիտություն և պերսպեկտիվ ունեցող գիտություն՝ գուրս գալով բուրժուական գիտության կողմից գրված սահմանափակություններից։

Լեզվական երևույթները, ինչպես և ինքն ամրող լեզուն, դիտվում են հասարակական տեսանկյունով իբրև մարդկային հասարակական կյանքի և զարգացման պրոցեսով։

Իսկ ժամանակ է այն բիոլոգիական տեսակետը, որ մշակել է բուրժուական լեզվաբանությունը լեզվի խնդիրները քննելիս։ Այդ դեպքում լեզվի ծագման հարցը, առանձին լեզուների առաջացման հարցը, ժողովուրդների առաջացման հարցը, լեզուների փոփոխման հարցը, մի խոսքով՝ լեզվի և լեզվաբանության բոլոր սկզբունքային հարցերը նոր լուսաբանություն են ստանում։ Բուրժուական տեսակետները ժխտող լուսաբանություն։

Դրա հետևանքով, «Լեզվի նոր ուսմունքը» առաջարկում է լեզվաբանական հարցերի հետեւյալ մեկնությունը։

1. Լեզուն առաջացել է գիտակցության ենտ միասին, որպես հետևանք մարդկային աշխատանքի և այդ աշխատանքի պրոցեսում։ Լեզվի նախնական վիճակը միանգամայն համապատասխան է եղել մարդկային մտածողության պրիմիտիվ վիճակին, որ որակապես միանգամայն տարբեր է մարդկային մտածողության արդիքության արդիք ստագիայից։ Լեզվի սկզբնական ստագիան սկզբել է ավելի կոնկրետ լեզվից՝ շարժումնային և գծային լեզվից։ Հնչյունական լեզվին անցնելը եղել է մտածողության զարգացման ստագիալ փոփոխության հետևանքով։ Յուրաքանչյուր հետագա ժամանակաշրջանի լույս հանդիսացել է նախորդի տրանսֆորմացիան մտածողության ստագիալ գրափոխության հետևանքով, և դրան համապատասխան։ Լեզվի պատմությունը, հետևաբար, նշանակում է լեզվի ստագիալ զարգացում, որ համապատասխան է մտածողության ստագիալ զարգացման պատմությանը։

2. Մարդկության կյանքը սկսվել է բազմաթիվ լույսից, որ համապատասխան է մարդկության սկզբնափորման բազմահասարակության վիճակին։

Մարգկային հասարակությունը առաջացել է իրեն բազմահազար մանք միավորումներ, հորդաներ կամ տուիմներ, որոնցից յուրաքանչյուրն իր ժարդ գառնալու պրզցեսում հնարել է իր սեփական լեզուն։ Արտադրողական ուժերի զարգացման հետևանքով առաջացած այդ մանը միավորումների հետագա խաչավորումները գոյացրել են ավելի խոշոր միավորումներ՝ տոհմական կամ ցեղային միավորումներ։ Այդ հասարակությաւնները միավորվել են և խոշորացել են տնտեսական գործունեության պրոցեսում, երբ զարգացել են արտադրողական ուժերը ու ստացել են նոր որակ։ Դրա հետևանքով էլ մանը լեզուների միավորումները տվել են ավելի խոշոր՝ տոհմական և ցեղային լեզուներ, իրեն պատմականորեն առաջացած ընդհանություններ։

Արտադրողական ուժերի զարգացման հետևանքով առաջացել է հասարակական հարաբերությունների նոր որակ, դասակարգային հարաբերությունների որակ։ Տոհմական հարաբերությունների քայլայման հիման վրա առաջացել է աշխատանքի հասարակական բաժանում (1-ին և 2-րդ) և դրա հիման վրա կազմավորվել են դասակարգային հասարակությունները տոհմական և ցեղական միավորների՝ հասարակությունների, միավորումներից։ Այդ միավորումների հարցը վերջին հաշվով լուծել է հասարակությունների տնտեսական գործունեության միասնությունը կամ այդ միասնությունը առաջացնելու անհրաժեշտությունը։ Այս հիման վրա տոհմական և ցեղական լեզուների մեջ պատմականորեն առաջացած լեզվական ընդհանությունները հանդել են նոր տիպի մեծ լեզուների գոյացմանը, որոնք ծալքավորվել են դասակարգային լեզուներով։ Լեզուների այդ միացման, ընդհանրացման հետևանքով առաջացած նոր լեզուն կրել է ստադիալ փոփոխությունը որակապես փոփոխել է լեզուները։

3. Բայց մեծ լեզուները նոր որակի երևույթներ են պատմական մի որոշ շրջանում՝ գոյացած իրեն արդյունք պատմականորեն առաջացող լեզվական ընդհանրությունների այն ժողովարդների հետ սիասին, որանց լեզուն են նրանք։ Այսպիսով ժողովուրդները գոյացել են իրեն հետևանք այլատարը ցեղերի ու տոհմերի մեջ պատմականորեն առաջացող ընդհանությունների։ Այդ ընդհանություններից մեկն է նաև լեզուն, ըստ որում այդ լեզուն կազմավորվում է իրեն բարբառների ամբողջություն հենց նրանց այդ բարբառների մեջ առաջացած լեզվական իրակությունների ընդհանության ճանապարհով, և որ յուրաքանչյուր բարբառը՝ դա որակական տրանսֆորմացիայի ենթարկված նախկին անշատ տոհմական լեզուն է։

Ինչպես տեսնում ենք, այդ սկզբունքների մեջ ուսսայականության որեւէ հետք չկա, այդ սկզբունքներն ասում են, որ ոչ ժողովրդի և ոչ էլ որեւէ լեզվի առաջացում կաված չէ որեւէ սասայի կամ ցեղախմբի հետ, այլ որ մարգկային հասարակությունները առաջացել են պատմականորեն գոյացած մի շարք հատկանիշների ընդհանրությունից և որ լեզուն այդ հատկանիշներից մեկն է, գուցե ասենակարենը։ Մարդն է ստեղծում իր հասարակությունը և իր լեզուն, նա ստեղծում է ոչ թե ցեղական ինչ-ինչ բնածին հատկություններով, այլ արտադրական աշխատանքով, տնտեսությունը կազմակերպելու այս կամ այն եղանակով և բնավ երբեք՝ իր ցեղական բնածին տվյալներով։

Պատմության զարգացման ըմբռնման այս տեսությունը միանդամայն-

ճիշտ է և դա բացատրում է, թե ինչու սկզբնապես մանր և բազմաթիվ հասարակությունները հնտադայում վերածվում են խոշոր, բայց փոքրաթիվ հասարակությունների: Այդ տեսությունը կանխատեսում է նաև այն, որ տնտեսությունը համարխարհային մասշտաբով կաղմակերպելու, կոմունիստական համաշխարհային արտադրություն կազմակերպելու հիման վրա մարդկությունը հանգելու է համաշխարհային հասարակության՝ մի համաշխարհային տնտեսությամբ և մի արտադրակերպով, ուրեմն նաև մի համաշխարհային ընդհանուր լեզվով: Այդ առթիվ ընկեր Ստալինն ասում է:

«Ենչ վերաբերում է աղքային կուլտուրաների և աղքային լեզուների ավելի հեռավոր պերսպեկտիվին, ապա ես եղել եմ ու շարունակում եմ մաս լենինյան այն հայացքին, թե սոցիալիզմի՝ համաշխարհային մասշտաբով հաղթելու ժամանակաշրջանում, երբ սոցիալիզմը կամրանա ու կենցաղի մեջ կմտնի, աղքային լեզուներն անխուսափելիորեն պետք է ձուլվեն մի ընդհանուր լեզվի մեջ, որը, ինարկե, չի լինի ոչ վելիկուսական, ոչ գերանական, այլ մի ինչոր նոր բան».<sup>1</sup>

Ոչինչ չկա ավելացնելու, ամեն ինչ ասված է լենինյան կանխատեսությամբ:

Սրանք են այն լեզվաբանական սկզբունքները, որոնք ընկած են սովորական հայագիտության հիմքում:

Սովետական հայագիտությունը առաջացավ և կազմավորվեց անհաշտ պայքարի մեջ ընդդեմ հին հայագիտության: Այդ պայքարը սկզբունքային պայքար էր, մարքսիզմ-լենինիզմի սկզբունքներից ելնող մի պայքար: Շատերը ցանկացել են պատկերացնել, իբրև թե սովորական հայագիտությունը որևէ կերպ թերագնահատում է հին հայագիտության ծառայությունները: Այդ ճիշտ չէ և ոչ միայն ճիշտ չէ, այլև բացարձակ զրպարություն է:

Սովետական հայագիտությունը միանգամայն պարզ գիտակցում է, թե ինչ տիտանական աշխատանք է կատարված հատկապես հին հայագիտաների՝ Հ. Անապյանի, Հ. Մանանդյանի, Մ. Աբեղյանի, Լեոյի, Մալխասյանի, այլև գիտնական Մխիթարյանների կողմից փաստական նյութերի բազմահազար տվյալներ՝ լեզվական, պատմական, գրական ու գրականագիտական, տասնյակ և հարյուրափոր հասորներով հավաքելու, ամբարելու, գասդասելու և պահպանելու մեջ: Եռանդ, նվիրվածություն իրենց ժողովրդի կուլտուրային, սեր զեպի աշխատանքը, քրտնաշան գործունեություն, որին վարձատրություն չսպասող տքնություն,—ահա այն հատկությունները, որ ունեցել են հայազգի հին հայագետները և կուտակել սովորական սերնդի համար իրենց ազնիվ աշխատանքի պառուները: Ո՞վ կարող է ժըխտել, ով կարող է մերժել այդ ամենը:

Սակայն այդ ամենը կատարված է մտքի և ոգու ստորագասություն ցուցարերելով կեպի եվրոպական բուրժուական գիտնականները: Լինելով կապիտալիստական հարաբերություններում ապրող ու գործող գիտնական, նրանք տեսել ու զգացել են հայ ժողովրդի ստորացման վիճակը: Ցարական միապետության և զաժան սուլթանիզմի քմահաճույքին հանձնված հայ ժողովրդը խոշտանգման է ենթարկվել հաճախ նույնիսկ հայրենի բռնա-

<sup>1</sup> Ի. Ստալին—Լենինիզմի հարցերը, Երևան, 1935 էջ 536—37:

կալների ձեռքով, կամ նրանց վարած ստորաքարշ քաղաքականության հիմեանքով: Արհամարհանքի ու հալածանքի մեջ ապլոդ հայ ժողովրդի վիճակին գիտակ մեր զիտնականները ցնծությամբ արձագանքում էին եվրոպացիների ամեն մի չնչին ուշադրության, նրանց ուրախացնում էր, երբ մի անվանի քաղաքագետ ու զիտնական կամ թեկուզ երկրորդ կարգի զիտնական լավ խոսքով էր հիշում հալածանքի ու ջարդի ննթարկվող հայ ժողովրդին: Իսկ նրանք, որոնք զբաղվում էին հայ ժողովրդի պատմության, լեզվի և կուլտուրայի պրոբլեմներով, արժանանում էին երախտազիտության մեծ զգացմունքի, երախտապարտության մեծ արտահայտության հայ բուրժուական ինտելիգենցիայի կողմբց:

Հայ բուրժուազիան այդ տրամադրություններն օգտագործում էր հայ ժողովրդի բախտը եվրոպական իմպերիալիզմի կառքի անշրջին կապելու համար, հասկանալի կդառնա, թե ինչո՞ւ այդ ստորաքարշության մըթնողրտը խտացվում էր հայ բուրժուական նացիոնալիստների կողմից և օգտագործվում հայ ժողովրդի քաղաքական ուղին ազատազրության իսկական ճանապարհից, այսինքն՝ հայ ժողովրդի բախտը ուռւսական աղատազրական շարժման հետ կապելու ուղղուց շեղելու համար: Այս բանն էր, որ հաշվի չեն առել հայ հին հայագեանները:

Մեր՝ Սովետական հայագիտությունը առաջ եկավ և զարգացավ սովետական կարգերում, լենինյան-ստալինյան ազգային պայծառ քաղաքականության կիրառման պայմաններում: Լենգուներով սովետական կարգելը, հայ ժողովուրդը ազատազրվեց զարավոր ստրկացման վիճակից, ստացավ իր ամենաբարձր տիպի պետականությունը՝ սովետական պետականությունը, հզորացավ տնտեսապես, ձեռք բերեց երջանիկ ապրելու նախապայմանները: Սովետական Մեծ Միության ժողովուրդների և առաջին հիրթին ուռւսական եղայրական մեծ և հումանիստ ժողովրդի աշխացությամբ կազմակերպվեց նրա սոցիալիստական տնտեսությունը և սոցիալիստական արդյունաբերությունը, որոնց հիման վրա աճեցին, զարգացան ու նոր թափ ստացան նրա նոր, սովետական կուլտուրան, գիտությունը, արվեստը և լեզուն: Հայ ժողովրդի<sup>1/5</sup> մտավ գպրոցները սովորելու, միջնակարգ կրթությունը զարձավ հանրամատչելի և մասսայական կրթություն, քարձագան ու նոր ծարակ հայ ստատուարդների համար: Տասնյակ անգամ ըազմացավ նրա ինտելիգենցիան՝ լցված սեփական հայրենիքի, սեփական սովետական պետության նկատմամբ սիրով և երախտազիտառությամբ: Այդպիսի մի միջավայրում չէր կարող առաջանալ կամ հող ունենալ ստորաքարշություն բուրժուական զիտության և կուլտուրայի հանդեպ:

Մեփական ժողովրդի անկախ պետականությունը, անկախ տնտեսական և քաղաքական կյանքը, սովետական երկու հարյուր միլիոնանոց ժողովրդի հզոր պետականությունը լցնում էն սովետական հայագեաններին հապարտության զգացումով, ուստի և նրանց զատողությունն ու մտածողությունը անկախ է բուրժուական իգելուզիայի ճնշումից: ահա ինչու նրանց հատուկ չէ ստորաքարշությունը:

Առաջնորդող սկզբունք ունենալով մարքսիզմ-լենինիզմը, ունենալով լեպարանական այնպիսի հենարան, ինչպիսին է սովետական հանճարեղ

գիտնական ն. Մառի ռէեզլի նոր ուսմունքը, սովորական հայագիտությունը մշակում է իր տեսական հիմունքները՝ անհաշտ պայման մղելով հին հայագիտության բոլոր արտաների ու թերությունների, այդ թվում նաև ստորաքարշության դեմ, հին հայագիտության տեսական սկզբունքների վեմ: Քանի որ հին հայագիտության տեսական սկզբունքները կը ըկանում էին եվրոպական բութուական իդեալիստական դրույթները, սովորական հայագիտությունը մերկացնում է այդ դրույթները իրեն սխալ սկզբունքային երակատմեր, չգիտչելով հին հայագիտությունը մշակում է հայագիտության նոր, սարքստական հիմունքները:

Պայքարը հանուն սովորական հայագիտության, հանուն մարքսիստական հայագիտության սկզբունքների մշակման հայտատանում սկզբեց 30. ական թվականների սկզբներին: Ըստ որում մարքսիստական հայագիտության համար գիտական արժեք ունեին ոչ միայն հին վերաբերող խնդիրները, այլև այսօրվա՝ այժմեական խնդիրները (քերականության, ուղղագրության և այլ խնդիրներ): Փոքանք հերթով շոշափել այն բոլոր հարցերը, որոնք վերաբերում են սովորական լեզվաբանական հայագիտության հիմունքներին:

1. Հին հայագիտության համար գոյություն ուներ գիտական մեկ պրոբլեմ, որ հանդիսանում էր նրա հիմնական պրոբլեմը: Դա հայ ժողովրդի և հայերեն լեզվի ծագման պրոբլեմ էր, որը լուծելու համար օգտագործվում էին շատ գիտություններ՝ հնագիտություն, լեզվաբանական ստուգաբանություն, հին աշխարհի պատմության ուսումնասիրություն, դանդարանություն, բնեուազրություն, պատմության հին աղբյուրների ուսումնասիրություն, տեղանունների ստուգաբանությունները, հին փուկանի ուսումնասիրություն և այլն, և այն: Այդ բոլոր գիտությունների ուսումնասիրությունները տարվում էին մի ուղղությամբ՝ ոչ թե օրեկտիվ տվյալները ուսումնասիրել և այդ տվյալներից եղբակացություններ հանելով լուծել հիմնական պրոբլեմ՝ հայ ժողովրդի առաջացման պրոբլեմը, այլ նախօրոք ընդունելով եվրոպական գիտնականների արտահայտած համողմունքը հայ ժողովրդի և հայերենի առաջացման մասին, նյութեր ու փաստեր հավաքել: Այդ բանը հաստատելու համար Այդ ուղղությամբ երեկոյին չնչին զիտողությունները համարել են մեծագույն նվաճում և կարևոր փաստ խոշոր եղբակացություններ հանելու համար: Այսպես, օրինակ, Սորաբոնը վկայում է թե՝ «ինչպես որ ասվեց, Արմենոսը թեսսալական Արմենիան քաղաքեց էր, որը գտնվում է Փերեյի և Լարիսայի միջև Բոյքեյիս լճի մոտ, և նա Յասոնի հետ արշավել է Արմենիա: Կերսիլոս Փարաւալացին և Մեդիս Լարիսացին ու նրանց հետ եղողները, որ մասնակցում էին Աղեքսանդրի արշավանքին՝ ասում են, որ հայերը եկել են արևմուտքից, եվրոպայից: Այսպես

Ինչպես տեսնում ենք, դա հունական մի ավանդություն է, որի անստույգ լինելը լույսի պես պարզ է: Բայց դրանից հնդեվրոպաբանները եղբակացնում են, որ հայերը եկել են արևմուտքից, եվրոպայից: Այսպես

<sup>1</sup> 2. Յանանդան — Քննտիկան տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Ա., Երևան, 1945 թ., էջ 14—15:

են և մյուս բոլոր վկայությունները Այդ մանր-մունք փաստերին իրենք հնդեվրոպաբան լուրջ զիտնականները չեն հավատում, բայց որովհետեւ դա անհրաժեշտ է հայերի առաջացման միգրացիոն տեսությունը հաստատելու համար, ուստի այդ վկայություններն ուղղնելով մի առանձին կարևորություն են տալիս զրանց:

Այդպիսի մանր կովանները ծառայեցնելով հիմք՝ միգրացիոն տեսության ջատագովները աշխատում են հիմնավորել եվրոպական բուրժուական զիտնականների տեսակեանները հայ ժողովրդի ծագման մասին Նըանք աչքաթող են անում կամ բոլորովին հաշվի չեն առնում այն, որ հայ ժողովրդի կենցաղակերպը, արտադրակերպը, ըմբռնումներն ու հասկացությունները, նույնիսկ Փիդրիկական կառուցվածքը անմիջապես չեն կապվում Եվրոպայի՝ անցյալում ապրած ժողովուրդների հետ, կամ եթե կապվում են, ապա այն չափով, ինչ չափով գա կարող է կապվել սեմական ժողովուրդների կամ ավելի ևս հարեան վրացի, աղքաբջանական և այլ ժողովուրդների հետ Բազմահազար են այն փաստերը, որոնք մեր ժողովրդի կուլտուրան, կենցաղը, սովորույթը, զբաղմունքը, արտագրակերպը, անունները, տեղանունները կապում են այն բնակիչների հետ, որոնք ապրել են Հայաստանում հայ ժողովրդի պատմության սկզբնավորումից շատ առաջ. Աչքաթող են անում այն, որ մեր ժողովուրդը ապրում է ուրարտացու ունեցած բնակաբանի մեջ, որ մեր ժողովրդի կանկարասին ու ամանեղենը Ուրարտուի տերիտորիայի բնակիչների կանկարասիների ու ամանեղենի զարգացման տեսակն է, կամ նույնիսկ նույն տեսակը (պուտուկ, շերեփ, զղար, խաչերկաթ, կարաս, խոօցի և այլն), որ մեր ժողովրդի արդուզարդը, զարդարանքներն ուղղակի շարունակությունն են կազմում Անդրկովկասի և Հայաստանի նախկին բնակիչների այդ կուլտուրայի, որ մեր ժողովրդի յուրաքանչյուր հատկած կրում է այն ցեղական անունը, որ մի ժամանակ Ուրարտուի երկրի ցեղերն էին կրում, որ մեր ամբողջ աշխարհագրական անունները տեղական են, իսկ լեզվի մատերիալի մեծ մասը տեղական, որ մեր լեզվի ամբողջ կառուցվածքը սեփական է, իրեն՝ հայ ժողովրդինը, նրա ստեղծագործածը, նրա մտածողական սիստեմի լեզվական ձևակրումը և այլն, և այլն Հենվելով մեկ բառի, գուցե և սխալ արտաքերված կամ արտապահած բառի, օրինակ «Արքմի» և «Արմեն» բառերի նմանության վրա, կատարում են այնպիսի նզրակացություններ, որ սովորական հետազոտողի մեջ առաջացնում են զարժանք ու հիասթափություն:

Պարզ է՝ այդ բոլորը արվում է նրա համար, որպեսողի անպայման հաստատվի, թե հայերը հնդեվրոպացիներ են:

Միգրացիոն տեսության հիմնավորման համար ամենաշատ փաստերը կպտնենք ակադեմիկոս Մանանդյանի աշխատության մեջ, որտեղ բերված են եվրոպացին և հայ զիտնականների կուտակած բոլոր ենթադրությունները: Եթե քննում ենք այդ աշխատության մեջ բերած տվյալները, նկատում ենք, որ լուրջ հավատալու փաստերը չկան, նրեի շատ չհավատալով եղած փաստերին, որոնք կարող էին հիմնավորել միգրացիոն տեսությունը, ակադեմիկոս Մանանդյանն ասում է. «19-րդ դարում կատարված զիտական խոշոր ուսումնասիրությունների ու մեծ գյուտերի շնորհիվ արդեն անվիճելի կերպով (ընդգծումն իմ է: Ա. Դ.) պարզաբանված է, որ այժմյան հայերի նախայլերը հնդեվրոպական արմեններն են, որոնք Փոքը Ասիայից գաղթել

ևն Հայաստան, հավանորեն 7-րդ դարում կամ 6-րդ դարի սկզբներում մեր թվականությունից առաջ»:<sup>1</sup> Ինչպես տեսնում ենք՝ այստեղ ակադեմիկոսը հնդեվրոպական բուրժուական գիտնականների կարծիքը բերում է իրեւ անվիճելի գիտական ձշմարտություն և ապա իր աշխատության բազմաթիվ էջերում ջանք գործ դնում այդ «անվիճելի» տեսությունը հաստատող մանրաւունքը փաստեր դիցել:

Մեկ առ միշտ, պետք է հայտարարենք բաց հակատով, որ սովետական հայագիտությունը բացարձակապես մերժում է բուրժուական պատմագիտության կոնցեպցիայի գիտականությունը։ Այդ բուրժուական պատմագիտության կոնցեպցիան, ինչպես Մառն է ասում, չակերտավոր գիտական հիմունքների վրա զրաված տերտերականությունն է, աստվածաբանությունը։

Սովետական հայագիտության համար իրեւ պատմագիտական կոնցեպցիայի հիմունք ծառայում են մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրների կոնցեպցիան և, ամենից առաջ, ընկեր Մատալինի հանճարեղ ու պարզ զրույթը հնդեվրոպական համարված ազգերի մասին։

«Ազգը—զա, ամենից առաջ, ընդհանություն է, մարդկանց որոշ ընդհանրություն։ Այդ ընդհանրությունը ոչ ասսայական է և ոչ ցեղական։ Այժմյան բատական ազգը կազմավորվել է հոսմայեցիներից, կերպանացիներից, էտրուսկներից, հույներից, արաբներից և այլն։ Ֆրանսիական ազգը կազմավորվել է գալլերից, հոռմայեցիներից, բրիտաներից, գերմանացիներից և այլն։ Նույնը պետք է ասել անգլիացիների, նեսեցների և այլոց մասին»:<sup>2</sup>

Այս ելակետով առաջնորդվելով՝ սովետական հայագիտությունը գեռ 1932 թվին հիմնավորեց հետևյալ թեզը՝ «Արմենները ոչ մի տեղից չեն եկել, նրանք եփրատի ափերի հնագույշաց բնակիչներն են, իրենց անունը տվել են Փոքր Հայքին, հետագայում այդ անունը հույների ու պարսիկների բերանով տարածվել է ամբողջ Հայաստանի վրա»:<sup>3</sup>

Ինչպես գիտենք՝ հետագայի ուսումնասիրությունները միանդամայն հաստատեցին այդ թեզը։<sup>4</sup>

Եվ քանի որ արմենների հարցն այդպիս է, ապա հայ ժողովրդի ծագման հարցը բոլորովին այլ կերպ է լուսաբանվում։ Բազմաթիվ փաստեր սովետական հայագիտությանը ղեռ 15 տարի առաջ բերին այն եղակացության, որ «հայերը և ոչ մի տեղից չեն եկել և ոչ մի հզոր սասայի ճյուղ չեն կազմուեց, այլ տեղական տոհմական կեցությամբ ապրող հասարակությունների փոխադարձ ներձույժան, սոցիալ-քաղաքական և տնտեսական ներթափանցման ու արտադրական ուժերի զարգացման հետեւնքով առաջ

<sup>1</sup> Հ. Մանանյան—Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հասոր Ա. Սրբեան, 1945 թ., էջ 7։

<sup>2</sup> И. Сталин—Сочинения, т. 2, стр. 292—93.

<sup>3</sup> Ա. Ղարիբյան—Ներծածություն հայոց լեզվի պատմության, Երևան, 1932 թ., էջ 59։

<sup>4</sup> Բ. Պոտրովսկու—История и культура Урарту, Ереван, 1944 թ.

<sup>5</sup> Գ. Ղափանցյան—Հայերի և հայերների զոյացման մասին, Սովետական գրականություն և արվեստ, 1941 թ.։

հեղած նոր էթնիկական գոյացում են՝ նախնական ֆեոդալական հասարակության գոյացման հիման վրա»<sup>1</sup>

Ինչպիս զիտենք, այդ ևս հիմնավորվեց հետագայի մի շարք նոր ուսումնասիրություններով<sup>2</sup> Սովետական հայագիտությունը գտնում է, որ ժողովուրդը կազմավորվում է իրեն զասակարգային հասարակություն, որ առաջանում է տոհմական հասարակությունների քայլայման հետևանքով։ Տոհմական հասարակության հարաբերությունները քայլայմում են նրանց արտադրողական ուժերի զարգացումը նոր աստիճանի վրա բարձրացնալու հետևանքով, նախնական կոմունիստական արտադրությունը անհատականով փոխարինվելու հետևանքով, աշխատանքի հասարակական առաջին և երեսորդ բաժանման հետևանքով։ Արտադրական նոր եղանակի առաջացումը՝ տնտեսության կազմակերպման նոր տիպը միացնում է տոհմական կարգերում իրարամերթ խմբերի։ Արտադրողները նոր՝ զասակարգային հարաբերությունների մեջ են թեսակովում, հասարակության արտադրական ուժերը նոր զասակուրություն են ստանում, և ահա այդ հիման վրա կազմակերպվում է հասարակական նոր միավոր, որ ձևավորվում է իրեն նորանուն ժողովուրդ։ Այդ ժողովը ինքորդի նախորդները կամ այն տոհմերն ու ցեղերը, որոնք կազմում են այդ ժողովուրդը, որքան են եկլոր և որքան տեղացի, զաշէ, որ լուծում է ժողովրդի զոյցման հարցը։ Հակառակ տեսակնախ է Մեյիհն, որն այսպիս է պատկերացնում հնդկավորական ուսասայի ներկայացուցիչների կողմից հին պետությունների և կուլտուրանների կազմակերպումը։ «Եկեղեցով ձեռնուրից մարդիկ՝ այս հաղթողները (հնդկավորական ուսասայի ներկայացուցիչները։ Ա. Պ.) ունին սոցիալական կազմակերպության մեծ զգացում։ Սրանք այն փոքրաթիվ արհստոկրատիաններն էին, որոնք, սկսած 2-րդ հազարամյակից նախքան քրիստոնեական դարաշրջանը, կազմակերպեցին Հնդկաստանը, Խրանը, Հայաստանը և ողջ Եվրոպան»<sup>3</sup>

Մեյիհեյի հետ որևէ կերպ համաձայնել չի կարելի. սասայորեն չի կազմակերպվում ոչ ժողովուրդը և ոչ էլ պետությունը

Այլ տնտեսական նոր՝ զասակարգային, կարգն է որոշում և՛ ժողովրդի կազմավորումը և՛ պետության կազմակերպումը։ Արտադրական շահագրգռված այլամերթ տարբերը անտեսությունը կազմակերպելու անհրաժեշտությունից կարող են մի հասարակություն կազմել։ Այդ ընթացքում, երբ պետք է լինում, շատ արագ կերպով վերանում են և լեզվի տարբերությունը, և՛ կենցաղի տարբերությունը, և իզերուցիայի տարբերությունը, թեև չպիսի աշխաթող անել, որ նախկին համակեցության պրոցեսում այդ բոլոր ուղղություններով առաջացած են լինում բազմաթիվ ընդհանրություններ, որոնք և ճիմք են ծառայում նոր ժողովրդի ընդհանրություններ, կողմերի որակի առաջացմանը և ուժեղացմանը։ Սովետական հայագիտությունը գտնում է,

1. Ա. Ղարիբյան—Ներածություն հայոց լեզվի պատմության, էջ 66.

2. Գ. Ղափանցյան—Հայերի և հայերենի զոյցման մասին—«Սովետական գրականություն և արվեստ», 1941 թ.։ Ա. Ղարիբյան—Ներած. հայոց լեզվի պատմության, 1935 թ.։ Ե. Պոտորովսկի—Կ вопросу о происхождении арм. народа, 1946 г. Ա. Ղարիբյան—Հայ ժողովրդի պատմության սկզբնափարման շրջանը.—Հայկական ՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, № 9, 1946 թ., հասար գիտ. սերիա. Շ. Կառաջյան—Կ происхождению армянского языка. 1946 г., Ереван.

3. A. Meillet, Les langues dans l'Europe nouvelle, p. 18, 1928.

որ Հայաստանի տերիտորիայի վրա իշխանությունը հնագույն եղել է Հարյուրից ավելի ցեղեր և տոնմեր, ինչպիսիք են՝ Եկեղիք, Խորձամբ, Կոբք, Հաշոյանք, Ծոփ (սեպազը. Սուրբարի), Հանձիստ (սեպազը. Ռուզիտ), Կորեք, Դեղիք, Աղանձիք (սեպազը. Աղինի), Խերիստ, կամ Խարիք և Հատ, Սատոնք (սեպազը. Սասու), Ասպակունիք, Աշմունիք, Երեվանիք, Մոկք, իշք (սեպազը. Խուռա), Կորդիք, Սորք, Սիունիք (սեպազը. Սիունի), Վայք, Կուռայք, Տայք (սեպազը. Դահիանիք), Արունիք, Ակունիք, Ամատունիք կամ Մատյանք, Արայինիք, Արանստ կամ Արենիք, Միլդիս (սեպազը. Միլիտուու), Ուրմիատիք (սեպազը. Ուրմիա), Պալահնիք, Կարդուք, Մարդք, Մարք, Մուշք, Կարինիք (սեպազը. Կիրինի), Դիատինիք (սեպազը. Դիտինի) և այլն, և այլն՝ Դրանց մենք հայերենի լեզվական ձևավորումով ուղղակի հիշատակում ենք որպես ցեղեր, բայց միայն տեղեր ենք հասկանում, ուրովինեաւ, բոլորին հայ համարելով, չենք կարողանում պատկերացնել, որ դրանք առանձին ինքնուրցւյն ցեղեր են եղել Անժխտելի է, որ դրանց հետ միասին հայեր են դարձած հատեյալ ցեղերը՝ Գոզ (Փոդարք), Շիրակ, Գամիք կամ Գիմրիք (Գյումրի), Սակ (Զօկ): Տվյալներ կան, որ վերջիններս սկյութական ցեղեր են և Հայաստան են եկել 7-րդ դարի վերջին և 6-րդ դարի սկզբներին։<sup>1</sup> Ահա այս բոլոր ցեղերից 7—2 դարերում դասակարգացին հասարակական հարաբերությունների հիման վրա կազմավորվել է հայ ժողովուրդը:

Այսպես է սովորական հայագիտության այս գրույթը:

2. Ինչպես հայ ժողովրդին, այնպես էլ հայերեն լեզուն հնդեվրոպարանությունը համարում է եվրոպայից կամ հնդեվրոպացիների հայրենիքց Հայաստան ներժուծված։ Այդ առթիվ գրված է. «Ենդվարանությունը հաստատել է, որ հայերենը պատկանում է լեզուների այն մեծ ընտանիքին, որ հայտնի է գիտության մեջ հնդեվրոպական լեզվարուն անունով և որին պատկանում են Հնդկաստանի արեւելյան ծայրը սինչև եվրոպայի արեւմտյան ծայրը (Խօլանդիա) տարածված լեզուները։ Այս բոլոր նախապես կազմում է մի լեզու, որ խոսվում էր հնդեվրոպացիների կողմից նախահայրենիքում, հնագույն ժամանակ։ Հետեւալես՝ տալ հայերենի սեմանտիկ նկարագրությունը, նշանակում է նկարագրել հնդեվրոպական նախաշրջանի լեզուն և հնդեվրոպացիների քաղաքակրթությունը։ Ապա՝ «Հնդեվրոպացոց նախահայրենիքի տեղը դեռևս ձիշտ չէ որոշված, նա գտնվում էր եվրոպայի արեւելյան մասերից սկսած մինչև Թուրքեստան գտնված տարածության մեջ՝ մի որոշ տեղ (հավանաբար Բալթիկ ծովի արեւելյան Կողմերը՝ արդի Լիտվայի սահմաններում կամ հարավային Բիուսաստանում։ Այլի ժամանակ այդ ազգը (Տիգլ) նախահայրենիքում բնակվելուց հետո, տալիս է իրենից զանազան գողթականություններ, որոնք փոփում են գրեթե ամրող եվրոպայի և Ասիայի մի մասի վրա։ . . . . «Հնդեվրոպացոց գողթականության սկիզբը պետք է դնել ն. թ. Յ. բ. դ. հաղարամյակի կեսին՝ այն է՝ 2500 թվերին»։<sup>2</sup>

Այստեղ ասված է ամեն ինչ և ընդունվում է անվերապահորեն եվրո-

1. Հ. Մանանյան — Հին Հայաստանի և Անդրկովկասի մի քանի պըոքիների մասին, Երևան, 1944 թ.։

2. Ա. Անոյան — Հայոց լեզվի պատմություն, 1 մաս, Երևան, 1940 թ., էջ 7—8։

պական գիտնականների կողմից առաջադրված այն տեսակետը, որ հայերեն լեզուն ներգաղթած հայ ժառովվրդի հետ միասին Հայաստան է քերված հնդկվրոպացիների նախահայրենիքից, այսինքն, ինչպես տեսանք վերևի մեջբերումի մեջ, այժմյան կիտվայից:

Այդպիս էր հին հայագիտության տեսակետը: Սովետական հայագիտությունը հիմնովին մերժելով այս տեսությունը, հաստատում է, որ Հայերեն լեզուն ոչ մի տեղից չի եկել, այլ նա գոյացել է (Հայաստանում): Հայերեն լեզուն չի ծնվել այլ նա ստեղծագործություն է նոր հասարակական հարաբերությունների, նա սոցիալական արդյունք է, և ոչ բիոլոգիական ծնունդ, նա պատմականուրեն գոյացած ընդհանրություն է»<sup>1</sup>

Սովետական հայագիտության այդ համոզմունքը բխում է այն բազմազար փաստերից, որոնք վկայում են, որ հայերեն լեզուն տեղական գոյացում է: Կազմավորվող էթնիկայի համար առաջանում են մի շարք հատկանիշներ, որոնք կազմում են այդ էթնիկայի մեջ մտնող ցեղերի ու տոհմերի ընդհանուր հատկանիշները, որոնցով և նրանք գիտակցում են իրենց միենույն էթնիկայի հատվածներ: Այդ ընդհանուր հատկանիշներից մեկն էլ լեզուն է, որ իրքե ընդհանրություն, առաջանում է երկար ժամանակվա պրոցեսում՝ ցեղատոհմային պատմական հարաբերությունների ընթացքում: Այդ ընդհանրուր հատկանիշը, լեզուն, ունենալով բազմահազար իրակություններ, ժառանգում է այդ իրակությունները իրենց նախորդող տոհմական անկախ լեզուններից, որոնք զարձել են արգեն տվյալ էթնիկայի լեզվի բարբառները: Եթե այդ էթնիկական լեզվին նախորդող անկախ ցեղատոհմական լեզունների մեջ կան ավելի կամ պակաս քանակությամբ ընդհանուր լեզվական իրակություններ, որ նույն են հարեւանների լեզունների հետ, փոխառնված են նրանցից կամ ներմուծված են ցեղական կամ տոհմերի ու տոհմաբերի գողթերի պատճառով, ապա գրանք իրքե նոր ժառանգություն անցնում են նոր լեզվին ի սեփականություն, եթե միայն նրանք ընդհանուր են բոլոր ցեղական լեզունների մեջ:

Հետեաբար՝ եթե հայերեն լեզվի մեջ կան լեզվական մի շարք փաստեր, որոնք կապվում են կամ որոնք նման են հնդկվրոպական լեզունների նույն փաստերի հետ, ապա ճիշտ չէ այդ նմանություններից ենինով դատել թե հայերեն լեզուն ինչ որ նախամայր լեզվի զավակն է և դրա հետեանքով է, որ նրա մեջ կան նման զծեր իր «եղբայրակից» հնդկվրոպական լեզունների հետ: Ամենից առաջ հայերեն լեզվի մեջ եղած բառական նմանությունները հնդկվրոպական լեզունների հետ կազմում են հայերեն բառապաշարի շնչին: տոկութ, այն է՝ ընդամենը 60%, 11 հազարից միայն 700, իսկ դրա դիմաց՝ 11 հազարից շուրջ 6 հազար որևէ կապ չունի որևէ լեզվի հետ և կապել էլ հանարակոր չէ: Հետեաբար՝ մեր բառապաշարի 50%<sup>o</sup>-ը կամ ավելին ժառանգված է տեղական ցեղատոհմական լեզուններից, ըստ որում այդ բառերի մեջ մտնում են այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ հաց, ջուր, ցորեն, զարի, ձու, ազի, անոք, ափ, բիբ, գանգ, բար, թիզ, թուշ, ժամիք, իրան, լանջ, ծոց, կաշի, կառափ, կատար, կատիկ, կզակ, կոպ, կուրծ,

<sup>1</sup> Ա. Դարբիքյան — Հայոց լեզվի պատմության ուսումնական ներածություն, Երևան, 1937թ., էջ 78.

կտուց, մազ, մորք, հօնէ, ներքան, շուրք, պինչ, պոչ, պորտ, վիզ, ֆիք, ծառ, ծով, գրաստ, ձախ, երկար, երկիր, բուլո, բուխս, բուխալ և այլն:

Նշանակում է, թե մեր լեզուն իր բառապաշարով հիմնականում տեղական է:

Ինչ վերաբերում է մեր լեզվի քերականությանը կամ ամենից առաջ հնչյունաբանությանը, ապա այդ մասին հնդեվրոպական խոշոր հայագետ Մեյբեն վկայում է, թե՝

„L'arménien présente donc un système phonétique tout différent de celui de l'indoeuropéen“.<sup>1</sup>

(Հայերենն, ուրեմն, ներկայացնում է հնդեվրոպականից միանգամայն տարրեր հնչյունական սիստեմ):

Հայերեն լեզվի ձեաբանությունը, այսինքն՝ հոլովումն ու խոնարհումը նույնպես հնդեվրոպական չեն ինչպես հին հայագիտությունն է պնդում, հայերեն լեզվի քերականությունն անփոփոխ կերպով իր ամբողջությամբ ժառանգված է հնդեվրոպական նախալեզվից և Հայաստան է քերպած ու պահպանված անվթար կերպով, անխառն կերպով: Այդ ապացուցելու համար համեմատություն է կատարվում հնդեվրոպական այլ և այլ լեզուների հետ և ցույց են տրվում նմանություններ, որոնք լրբ թե վկայում են հայերեն լեզվի քերականության նույնությունը հնդեվրոպական նախամայր լեզվի հետ Բայց նույն Մեյբեն, հետագոտելով հայերենի քերականությունը, պնդում է, թե՝

„Dans l'ensemble le système phonétique et morphologique de l'arménien est profondément distinct de celui de l'indoeuropéen“.

(Ամփոփ ասած՝ հայերենի հնչյունական և ձեաբանական սիստեմը խորապես տարրերվում է հնդեվրոպականից):<sup>2</sup>

Այդ նշանակում է՝ չնայած բոլոր ջանքերին, եվրոպացի հնդեվրոպաբաններին չի հաջողվում ապացուցել իրենց թեղը, և նրանք զի՞նաթեափ են լինում փաստերի առաջ:

Տեսնում ենք, որ հին հայագիտության տեսության քերականական կովանները խիստ թույլ են, չնչին և ոչինչ չասող:

Իրավես մեզ համար մի ինդիր կապրզելու: Ինչպես է առաջացել հայերենի և ընդհանրապես բոլոր լեզուների խոնարհումն ու հոլովումը, ինչպես է առաջանում բառածանցումը: Հնդեվրոպաբանական լեզվաբանությունը այդ հարցերին վճռական պատասխան չի տալիս, իսկ այն լեզվաբանները, որոնք այդ հարցերին պատասխանում են, սովորված են ընդունելու, որ հոլովման և խոնարհման քերականական երկությները առաջանում են ամբողջական բառերի կցումով, նույնը և ածանցումները: Ուստի պետք է ընդունել, որ հնդեվրոպական համարված ընդհանուր ածանցները կամ հոլովման ու խոնարհման մասնիկները առաջացել են անկախ բառերից: Դրանք ինչպես են առաջացել և թնչ ճանապարհով, հնդեվրոպաբանները չեն էլ ցանկանում պարզել, որովհետև այդ հարցի քննությունը հանգեցնում է լեզուների զարգացման սահմանական տեսության, որը

<sup>1</sup> A. Meillet—Esquisse d'un grammaire comparée de l'arménien classique, p. 7.

<sup>2</sup> Նոյն տեղում, էջ 111.

միանգամից ժխտում է լեզուների առաջացման ծննդաբանական տեսությունը: Այդ պատճառով հնդիքոպատճանության ընդհանուր լեզվաբանական ուսումնասիրությունները չեն խորացվում և վերջին հաշվով նվիրվում են ծննդաբանական հարցերին: Մինչդեռ լեզվի մեջ քերականության և շարահյուսության առաջացման պրոբլեմը լեզվաբանության գիտության ամենակարևոր պրոբլեմներից է և դրանից ենթակա է, որ պետք է լուծել ամեն մի լեզվի քերականության և շարահյուսության առաջացման հարցը:

Սովետական լեզվաբանությունը հաստատել է, որ լեզուների զարդացման պրոցեսը կատարվում է ստագիաներով, որ արտացոլումն է մտածողության զարգացման ստագիաների: Լեզվի ստագիալ զարգացման հետևանքով առաջացել է լեզվի շարահյուսական և ձևաբանական կառուցվածքը: Լեզվի ստագիալ զարգացման տևողությունը ենթագրում է մարդկային լեզվի զարգացման ընդհանուր օրինաչափությունների գոյությունը, որոնցով և բացարձիլի են լեզուների ձևաբանության ու շարահյուսության առաջցումն ու զարգացումը: Ակադեմիկոս Մարի ուսմունքի հիմնաքարը կադրող մի սկզբունքը՝ լեզվաստեղծման համաշխարհային պրոցեսի միասնությունը հանդիսանում է այն հիմնավորումը, որ տալիս է նա լեզվի ստագիալ զարգացմանը: Մարի այդ միաբն հաստատվում է մարքսիզմի այն խորը գրույթով, ըստ որի «թևե ամենազարդացած լեզուներն ունեն օրենքներ ու սահմանումներ, որոնք ընդհանուր են ավելի նվազ զարգացած լեզուների հետ, բայց հենց նրանց տարրերությունն այդ համընդհանրականից և ընդհանուրից այն է, որ կազմում է նրանց զարգացումը»:<sup>1</sup>

Սովորական լիզվաբանության համար էլ Մարգսին նշած այդ ընդհանուր օրենքները գտնված են և որոշված լեզուների ստադիալ զարգացման տիեզերական մեջ։ Այդ օրենքները հետեւյալն են.

1. Ամեն մի լեզվի շարահյուսությունը զարդացել է պրիմիտիվ վիճակից բարդ վիճակը՝ կապված գիտակցության ստադիալ զարդացման հետ, կամ արտացոլելով գիտակցության ստադիալ զարդացումը:

2. Զետարանությունը զարդացել է շաբանյուսության մեջ շաբանյուսական կառուցվածքի սրակական փոփոխության հետևանքով, որ արտացումը է պիտակցության սրակի փոփոխություն:

3. Մարգկային լեզուն թե՛ իր շարահյուստկան կառուցվածքը և թե՛ ձևաբանության կառուցվածքը ձեռք է բերել զարդացման բարձր աստիճանի վրա, նախնական շրջանում չի եղել ոչ ձևաբանություն և ոչ շարահյուստի թյուն:

4. Բառական զարգացումն էլ ընթացել է պրիմիտիվից դիպի կատարյալը, բառերը իրեն նախագասության անդամներ և իրեն խոսքի մասեր առաջացել են լեզվի զարգացման պրոցեսի բարձր աստիճանի վրա:

Այս բոլորից երեսում է, որ մարզկային խոսքի սկզբնական շրջանում բառապաշարը, շարահյուսությունը և ձեւաբանությունը կազմել են մի ամբողջություն, իբրև զիփուղ վիճակ: Հստ Մարի բառն ու հնչյունն էլ կազմել են երբեմի զիփուղ վիճակ: Հնտեսաբար՝ լինվի զարգացման պրոցեսը եղել է այդ զիփուղ վիճակի անընդհատ պարզացումը: Աստիճանաբար բառն ու հնչյունը տարբերակվել են միմյանցից, ապա բառն ու նախադա-

<sup>3</sup> К. Маркс—К критике политической экономии, Москва, стр., 17, 1932 г.

սությունը միմյանցից, ապա ձևաբանությունն ու շարահյուսությունը միմյանցից: Խոսքի զարգացման այդ պրոցեսում հն առաջացել մի կողմից համարականության անդամները, մյուս կողմից խսքի մասերը:

Նախադասության բարգացման և հետագա գարգացման պրոցեսում բառերից մի քանիսը, հիմնականում գերանունները, ստացել են փունկցիոնալ արժեք և վերածվել են հոլովական և խոնարհման մասնիկների: Այդ ամենը կատարվել է յուրաքանչյուր ժողովրդի մոտ, յուրաքանչյուր առանձին լեզվի մեջ յուրատիպ և իրեն հետևանք հասարակական գիտակցության զարգացման նոր աստիճանի վրա բարձրանալու, նոր որակի հետեւաբար լեզուն մի այլ տեղից չի կարող բնրված լինել, այլ նա կազմվել է այն հասարակության խօսքի զարգացման պրոցեսում, որի լեզուն է նա:

Այս գրությունից են լուզ սովորական հայագիտությունը հետազոտում է և միանգամայն տարբեր լուսաբանություն տալիս հայերենի քերականությանը և շարահյուսությանը:

Հայերեն լեզվի գերականական և շարահյուսական ընդհանուր կառուցվածքը մի որոշ չափով նուան է նողեվրոպական տիպի լեզուններին, բայց նրանց հետ նույնական չէ: Դա հետևանք չէ նրա ազգակցության, այլ պատմուկան ստագիալ զարգացման: Բազմաթիվ փաստեր վկայում են այն մասին, որ հայերեն լեզուն կազմավորվել է հայ ժողովրդի կազմավորման պրոցեսում, նրա հասարակական գիտակցության զարգացմանը գուգահեռ՝ արտացոլելով այդ գիտակցությունը:

Հայերեն լեզվի ձեմքանական կառուցվածքի մեջ նկատվում է մի զարմանալի օրինաչափություն, որ հատուկ է միայն հայերենին: Այդ օրինաչափությունը այն է, որ հայերեն լեզվի խոնարհիչները և հոլովիչները, որ նրա թեքականության ցուցանիշներն են, արտահայտվում են նույն մասնիկներով՝ ա, ե, ի, ո, ու: Հայերեն հոլովակազմիչները հանդիսանում են այն ցուցանիշները, որոնք վկայում են, թե այդ հոլովումը ասածացել է կցական ստագիայից, նույնական և հայերեն բայի գեմքի վերջավորությունները վկայում են նույնական թե հայերենի խոնարհումը առաջացել է կցական ստագիայից: Այսպիսում մի զարմանալի միասնալություն կա գրաբարի հոլովման և խոնարհման կառուցվածքի մեջ, և երկուսն էլ վկայում են, որ հայերեն լեզուն զարգացել է կցական ստագիայից գեպի թեքական ստագիա: Այդ երեսութիւնը գաղտնիքը զանելու համար զիմենք գրաբարի շարահյուսությանը և փորձենք որոշել նրա զարգացման հիմնական ստագիաները, որոնք առաջացրին հայերենի ձեմքանությունը:

Հետագոտությունը պարզում է, որ նախահայկական լեզունների հին նախորդների սկզբնատկան նախագասությունը կազմված է եղել՝ մեկական բառերից, որով հիմնականությամբ արտահայտել են տոտեմիզմի շրջանի իգեուլգիական ըմբոնումները: Այդ բառերը հետագայում հայերեն լեզվի մեջ արտադրությայի և ննթարկելով՝ գարձել են հական բայեր և դերանուններ: Եվ քանի որ հայերեն լեզվի նախորդները շատ լեզուններ են եղել այդ պատճառով ել հայերեն լեզվի մեջ նրանցից ժամանգիպի են էական բայերի և վերանունների հինգ նորկայացուցիչները, որոնք և են՝ ա, ե, ի, ո, ու: Այդ գերանուններն ու էական բայերը նախահայկական լեզունների նախորդները լուսաբանությունը համընդհանությունը կատարել են համընդհանություր ենթակայի գեր, ինչպես, օրինակ՝ ցուրտ է,



շոգ է, մուր է, լույս է, անտառ է, ջուր է, որս է, զազան է և այլն, և այլն Այդ շրջանուը բառն ու նախաղասությունը տարբերակվել են միմյանցից և մի համբողինանուր ենթակային վերագրվել են գիտակցված այն բոլոր առարկաները, որոնք արտահայտվել են բառով, բայց այնպիսի բառով, որի մեջ խոսքի մասները գեհո գիտուղ վիճակում էին: Գիտակցության մեջ կատարված առաջին նողաշրջումը, որ անպայման հիտեանք է տնտեսական կյանքի մեջ կատարված նեղաշրջման, ասենք թե նին քարե գործիքները փախարինվում լինեն նղկված քարե գործիքներով, որով բարձրացել է արտադրությունը և հասարակության տնտեսական գործունեության մեջ ընդգրկվել են բազմաթիվ առարկաներ, հասարակությունը գիտակցել է շատ առարկաներ, հնեաբանական օրենքներով նրանց անուններ տվել և վերագրել մի համընդհանուր ենթակայի: Ուստի, մեր կարծիքով, հայերն էական բայցի կազմված բաղադրյալ ստորոգյալի տիպը ավելի նին է, քան պարզ կամ բայսական ստորոգյալի տիպը:

Հասարակության մտածողության մեջ երկրորդ նեղաշրջումը կատարվում է այն ժամանակի, երբ առաջանում է սեփական կոլեկտիվի, սեփական գործիքի, այլև սեփական իրերի հատկացական կամ պատկանելիսական ըմբռնումը, ուստի այդ նին կառուցվածքի նախաղասությունների վրա ավելանում են իմ, են, իւր, հատկացական բառերը: Որից առաջանում է արդեն նախաղասության գիմավոր կառուցվածքը՝ զործ է իմ, բան է իմ, զործ է իւր, որս է իւր, բան է իւր և այլն: Այսահեղ տուեմի գերանունը՝ են համընդհանուր ենթակա է, զործ, բան, որս՝ ստորոգյալներ, իսկ իմ, իր, իւր բատկացական բառերը՝ հատկացուցիչներ:

Մտածողության զարգացման երրորդ նեղաշրջումը կատարվում է այն ժամանակ, երբ անհնտանում է ստուեմիզմը ըմբռնումը, հասարակական իդեոլոգիան նոր որակ է ստանում, գործողությունը աստիճանաբար վերագրվում է անհատին, այսինքն՝ ինկական ենթակային և զրահիտեանքով նախաղասության կառուցվածքի մեջ առաջանում է հիմնական փոփոխություն, որտեղ «ե» այլևս դերանուն չէ, այլ միայն պնդող բառ, իսկ իմ, իւր և այլ ստացական բառերը իրենց վրա վիրցնում են ենթակայի ֆունկցիան՝ իդեոլոգիական ենթական փոխարինվում է փաստական ենթակայով, առաջանում է նախաղասության այն կառուցվածքը, որ գրաբարում մենք այժմ ունենք և որ կոչում ենք պասեսիվ կառուցվածքի կամ հատկացական կառուցվածքի նախադասություն, որի օրինակն է՝ զործեալ է իմ:

Այս կառուցվածքի նախաղասության մեջ երեսը է նրա ավելի նին շրջանի ըմբռնումը: Եթե այժմ այդ նախաղասությունը հասկանում ենք՝ «ես գործել եմ», այսինքն՝ իմ է ես, իսկ «է» իրեն պնդող բառ ծառայում է ստորոգյալը ենթակային կատելու համար, այսինքն՝ հանգույց բառ է, ապա հակառակ ենթերցման ժամանակ ստացվում է՝ իմ է զործեալ:

Այս շաբադասության մեջ պիմ բառը հատկացական է, «է» ենթակա, իսկ «գործեալ»՝ ստորոգյալ ստացվում է պիմ էն գործել է»:

Այդ հաստատելու համար հնորու գնալու պետք չկա, պետք է միայն կարգալ բոլոր գեմեքերը հակառակ ծայրից:

Գործեալ է իմ	իմ է գործեալ
Գործեալ է քո	քո է ։ ։
Գործեալ է նորա	նորա է ։
Գործեալ է մեր	մեր է ։
Գործեալ է ձեր	ձեր է ։
Գործեալ է նոցա	նոցա է ։

Ինչպես տեսնում ենք՝ ստորոգելիական կառուցվածքը բոլոր գեմքերի համար միշտ միենույնն է, այսինքն՝ երրորդ գեմքի ենթակայի ու ստորոգյալի սպորական համաձայնություն գեմքով և թվով չկատարվությունը Դա հասկանալի է դառնում, երբ ընդունում ենք, թե «Ե»-ն բոլոր այդ նախադասությունների մեջ ենթակա է, ուստի սահացվում է «իմ է»-ն գործել է, քո է»-ն գործել է» և այլն:

Պարզ է, որ նախադասության պոսիսիվ կառուցվածքը գրաբարում կենդանի վկան է հայերենի շարահյուսության գարգացման այն ստաղիայի, երբ հասարակական գիտակցությունը կոլեկտիվիտական գիտակցությունը էր, Գրաբարի մեջ եղած այդ կառուցվածքը վկայում է նաև, թե գրաբարը լեզուն տուածցել է այնպիսի մի տիպի լեզվից, որը կոլեկտիվ հասարակական գիտակցության գրանորողն էր: Հասկանալի է, որ հասարակական գիտակցության չորրորդ հեղաշրջումը, երբ անհատական արտադրությունը պայմանավորում է կունենալիքի քայլացածը և դաստիարակային հասարակական հարաբերությունների հաստատումը, հեղաշրջում է նաև հայերենի (այս անդամ արդեն հայերենի՝ նոր կազմավորված լեզվի) շարահյուսութական կառուցվածքը և առաջացնում գրաբարի ներգործական կառուցվածքի նախադասության շարունյուսությունը: Լեզվական մատերիալի վրա այդ նշանակում է, որ արդեն ունել կերպով գիտակցված տաշրիք գեմքի ենթականեր են առաջանում լեզվի մեջ, որոնք են՝ սա, դու, նա, մենք, դուք, նրանք, իմ, իր և այլ սեռական ենթական ներգործական կորցնումը են իրանց լեզվական արժեքը, որովհետև նրանք գիտակցության մեջ որևէ հենարան չունեն և կաշում են կամ ստանում նոր Փունկցիա՝ վերածվելով էական բայցի գեմքի վերջավարությունների, որ ավելի լավ երկում է էական բայցի անցյալի ձևերի մեջ՝ է-ի (մ), է-իր (իր), է (լր >իր> իւր):

Այսպիս առաջանում է հայերեն լեզուն իր էական բայցի խոնարհման հետ միասին և զա է, որ դառնում է համընդհանուր լեզվական կատեգորիա կազմավորված գրաբարի և բարբառների համար, զա է, որ իր որպակով հայերեն լեզվի մի մասն է: Այսուհետև հայերենի խոնարհումը կազմվում է զոյականների ու ածականների ամբողջական ձեւերին այդ էական բայց կցվելով, որից ստացվում է՝ գործելի (ի գործի էի), գործեիր, գործեր և այլն:

Այսպիս առաջանում են հայերեն լեզվի խոնարհման այն մասնիկները, որոնք հնդեմոպարանները համարում են ըերովի կամ թե ոնքացատրելի ու առեղծվածային: <sup>1</sup> Նույն կարգով էլ ապացուցված է, որ հայերենի հոլովումը տուածցել է երրորդ գեմքի գերանվան ձեւերի կցումով գոյականին ու ածականին: Եվ քանի որ էական բայցերի ու գերանունների ձափումը նույնն է, երկուսն էլ հասնում են տոտեմիզմի գիտակցության շրջանին և այդ շրջանի գիտակցության մեջ նույնացված են եղել, այդ

<sup>1</sup> A. Meillet, Esquisse etc., p. 88 և այլ տեղեր:

պատճառով էլ հայերեն լեզվի գերանուններն ու օժանդակ բայերի արմատները նույն են (ա, ե, ի, ո, ու): Դրա հետևանքով էլ հայերենի խոնարհչներն ու հոլովիչները նույն են՝ ա, ե, ի, ո, ու:

Այստեղից սովետական հնագիտությունը պնդում է, որ հայերեն լեզվուն առաջացել է Հայաստանի տերիտորիայում միայն ու միմիայն հայժողովրդի գիտակցության մեջ, հայ ժողովրդի նախորդների գիտակցության զարգացման և հայ ժողովրդի կողմից այդ գիտակցությունը ժառանգելու և նոր աստիճանի վրա, արդեն հայկական տատիճանի վրա բարձրացնելու հետեւանքով: Եվ այսպես, ինչպես ինչպես ինժեները կառուցում է իր ճարտարապետական հզացումը այլ և այլ նյութերից, այդպես էլ մեր ժողովուրդը իր լեզվի կառուցումը կատարել է այլ և այլ նյութերից և' իր նախորդների՝ տեղական ցեղերից ժառանգած լեզվական նյութերից: Ինչպես ինքն է ուրիշից փոխ առել, այնպես էլ ինքը ուրիշին տվել է, եթե զրա կարիքը հարեւան կազմավորվող վրացի, աղբբեջան, պարսիկ և այլ ժողովուրդները ունեցել են: Այդ է պատճառը, որ հայերեն լեզուն նման տարբեր ունի մոտիկ ու հեռու հարեւանների հետ:

Այսպես է սովետական հայագիտության այս երկրորդ դրույթը:

3. Սովետական հայագիտությունը զբաղվել է հայոց լեզվի պատմությունը կառուցելու հարցերով և:

Այդ պրոբլեմը հին հայագիտությունը լուծում էր ըստ իր ընդհանուր տեսության: Այսպես, ըստ հին հայագիտության՝ հայերենի նախնական վիճակը ներկայացնում է զրաբարը, որով խոսել են բոլոր հին հայերը մինչև 12-13-րդ դարերը: Այդ գրաբարի աղավաղման հետեւանքով առաջանում են միջին հայերենը և բարբառները, այսինքն թե՛ գրաբարի ծնունդն է միջին հայերենը և հայերեն բոլոր բարբառները, այլև աշխարհաբար հայերենը: Այսպիսով հայերենի պատմությունը «բարձրորակ» գրաբարի անընդհատ անկումն է գեպի բարբառային «ցածր որակը»: Այդպիսի պատմություն և այն էլ լեզվի պատմություն ընդունելի չե, որովհետև լեզվի պատմությունը հասարակական զիտակցության պատմությունն է, իսկ հասարակական գիտակցության պատմությունը հասարակական կյանքի պատմության անդրագարձումն է կամ արտացոլումն է, իսկ դա անընդհատ գեգրագացիայի հնթարկվող երևոյթ չէ:

Ըստի սովետական հայագիտությունը չի ընդունում, որ գասակարգային հասարակության մեջ կարող է լինել համեմատար մեկ լեզու, Դասակարգային հասարակության մեջ զոյտեթյուն են ունենում դասակարգային լեզուներ, որոնք իրար հակառագում են այսպես, ինչպես հասարակության կյանքի մեջ այդ գասակարգերը միմյանց հակարգը ունի Այսպես՝ ըստ սովետական հայագիտության՝ լեզվի զարգացումը չունի անբացառելի, իմմանենտ հատկություն, այլ դա անընդհատ, միմյանց հակարգով և միմյանց մեջ ներթափանցված տարբերակների խաչակրման պրոցես է ներկայացնում: Ըստ մեր զրույթի մարդկային խօսքը պահպել է բազմալեզվությունից, որ անընդհատ փոխտղարձ խաչակրման հետևանքով դնում է զեպի քչակեզվություն կամ միալեզվություն: Այդ, ուրեմն, այդ

բազմալեզվության մեջ տարբերակները հակադրված են միմյանց և գտընվում են անընդհատ պայքարի մեջ՝ բախման, խաչավորման, որով և հանգում են համազգության լեզվական նոր աստիճանի վրա: Դրա հետևանքով բազմաթիվ տարբերակող լեզուներից կամ լեզուների տարբերակներից համազրվում են փոքրաթիվ, բայց մեծ լեզուներ: Այդ մեծ լեզուները սովորաբար կազմվում են դասակարգային հասարակության ժամանակ, ծալքավորվելով դասակարգային լեզուներով, որտեղ իշխող դասակարգի լեզուն իր դիմաց ունենում է ժողովրդական բազմաթիվ բարբառները: Այդ ժամանականից սկսած ժողովրդական բարբառները իրեն աշխատավոր և շահագործվող դասակարգի լեզուներ հակադրվում են իշխող աղնվականության լեզվին, կազմելով նրա հետ միասնական մի ընդհանուր էթնիկական լեզու: Իրանց անընդհատ խաչավորումը, անվերջ պայքարը և առանձին հատվածներով և առանձին փաստերով, լեզվական առանձին իրակություններով ընդհանրանալու անընդհատ պրոցեսը հանգեցնում է մի նոր որակի լեզվի առաջացման, երբ իշխող դասակարգը իր տեղը զիջում է մի նոր իշխող դասակարգի: Նախորդող իշխող դասակարգի լեզուն մնում է իրեն կուլտուրական ժառանգություն: Կազմավորվում է նոր հասարակությունները նոր միասնական լեզվով, որտեղ իշխող դասակարգի լեզուն, որ համազրված է նախորդի լեզվից և ժողովրդական բարբառներից, որ ավելի դեմոկրատական է, ավելի մոտ ժողովրդականին, հակադրվում է գոյությունը շարունակող ժողովրդական բարբառներին և դրանց հետ անընդհատ ներթափանցման ու խաչավորման պրոցեսի մեջ զտնվում: Այդ խաչավորումն է, որ անընդհատ կենսական ուժ է տալիս լեզվին և նրա զարգացմանը: Զենք ժխտում և ոչ միայն չենք ժխտում, այլև պնդում ենք, որ այս ներքին խաչավորման պրոցեսին զուգընթաց տեղի է ունենում նաև արտաքին խաչավորման պրոցես, ուրիշ լեզուների հետ խաչավորվելու պրոցեսը՝ բառափոխառություններով և երբեմն ձեւափառությունների միջցոցով:

Այդ սկզբունքից ենենով էլ սովորական հայագիտությունը հայոց լեզվի պատմությունը զիտում է որպես հակադրույթունների պայքարի պատմություն, բաժանելով այն չորս հիմնական փուլերի: Այդ փուլերից առաջինը առնվում է զբերի գյուտից մինչև 12-րդ դարը: Այդ շրջանում զբականության մեջ միակ տիրապետողը աղնվականության դասակարգային լեզուն էր, զբարարը, որը մեր հին հեղինակները կոչում են ստանիլ լեզու: Փրաբարի կողքին, նրան իրեն հակադրություն, գոյություն ունենին հայերենի մեծաքանակ բարբառները: Այդ բարբառների և զբարարի հակադրամիանությունը կազմում էր հայ էթնիկական լեզուն: Գրաբարն ու բարբառները փոխադարձ անընդհատ խաչավորություններով մեկը մյուսի վրա ազգում էին, մեկը՝ յոյուսին հարսաւացնում, մեկը՝ յոյուսի հետ ավելացնում իրենց հարսաւությունները: Չնայած զբարարի դիմագրության՝ բարբառները ազգում էին այդ զբարարի վրա և սնում նրան իրենց կենսաբար ակունքներից, որով և գրաբարը մնում է կենդանի: Բայց քանի որ հին ֆեոդալ դասակարգը հակադրվում էր հայ զյուղացիությանը, ուստի նրա դասակարգային լեզվի սկսածը հիմնական փոփոխության չէր ենթարկվում, այլ միայն կրում էր բարբառների լոկ ազդեցությունը: Հայ հին ֆեոդալական հասարակությունը ներքին և արտաքին հակասություններից, ինչպես և արտաքին ուժերի նվաճումների մնջումից կործանվում է, ոչնչա-

նում է հայ ֆեռդալական դասակարգը, իր հետ տանելով գրաբարի կենզանությունը: Գրաբարը մնում է միայն զրի լիզու, «ոստանիկ» լիզուն դառնում է «գրաբար»: Զէ՞ս որ ճշմարտություն է, որ շահագործողները գալիս ու գնում են, անմահ է մնում միշտ ժողովուրդը: Ուստի հայերին բարբառները պահպանում են իրենց գոյությունը, մնում են իրեն ժողովրդական խոսակցական լեզուներ նաև գրաբարի «մահից» հետո 11—12-րդ դարերում Հայաստանում փոփոխվում են հասարակական հարաբերությունները, այդ դարերից սկսվում է հայկական ֆեռդալիզմի քայլայման դարաշրջանը: Հասարակական շահագործական հարաբերությունները չեն վերանայմ, նրանք վերաբարձրվում են ֆեռդալիզմի քայլայման տիպի որակով և առաջացնում ճորտատիրական դասակարգ, իրեն հայ հասարակության իշխող դասակարգ, որ իր ծագումով տարբեր է՝ ազնվականությունից առաջացած, և առետրականությունից առաջացած, ուստի և այդ նոր իշխող դասակարգի համար գրաբարը մեռած լիզու էր: Բայց տիրելով հայ հասարակական կյանքի նյութական հարստություններին, այդ դասակարգը ժառանգում է նախորդի կուլտուրական հարստությունները ևս, որոնց թվում ե գրաբար լեզուն, որը համագրելով կենզանի խոժակցական լեզվին, հայ բարբառներին, առաջացնում է մի նոր ափաբի գրական լեզու՝ միջին հայերին, իր առանձին որակով: Այդ լեզոն պահպանվում է հայ հասարակության գրական անդաստանում մինչև 17—18-րդ դարերը: Այս է հայոց լեզվի պատմության երկրորդ փուլը:

19-րդ դարում հայ հասարակությունը ապրում է հարաբերությունների նոր բեկում: Տնտեսական արտադրական կյանքում առաջանում են կապիտալիստական հարաբերություններ, կազմակորվում է հայ բուրժուազիան, որի հասարակական հարաբերությունների ամրապնդման համար զգացվում է համազգային հասկանալի լեզվի անհրաժեշտություն: Առաջանում է աշխարհաբար զրական հայերինը և հաստատվում է գրական անդաստանում: Այդ լեզուն համագրվում է կրկին անդամ բարբառներից, միջին հայերինից և զրաբար լեզվից: Այդ լեզվի տիրապետման ժամանակաշրջանում շարունակում են պահպաններ իրենց գոյությունը հայերենի բարբառները, որոնք այդ նոր լեզվի հետ կազմում են հակադրամիանություններ: Մարդունակելով հակադրվել այդ գրական լեզվին նրանք խաչավորվում են նրա հետ, սնում նրան և առաջ մղում նրա մշակման գործը: Այդ լեզուն կատարում է իր հասարակական լեզը՝ միաժամանակ կուլտուրապես բարձրացնելով մեր բարբառային ժողովրդին, դաստիարակում է նրա ինտելիգենցիային, սակայն այդ գրական լեզվին նրանք խաչավորվում են նրա համընդհանուր, համաժողովրդական գրական լեզու, որովհետեւ բուրժուական հասարակարգում ժողովրդական պանդվածները հեռու են պահպում և նյութական բարեկանություններից: Այս անենից նրանք ստանում են այնքան, որքան դա ցանկանում է բուրժուազիան: Ուստի ժողովրդը անընդհատ պայքարի մեջ է բուրժուազիայի հետ այդ նյութական և կուլտուրական բարիքների համար: Այդ տևում է մինչև 1920 թիվը: Այդ մեր լեզվի պատմության երրորդ փուլը:

Ազատարար Հոկտեմբերի լույսի ճաճանչները իջնում են նաև հայ ժողովրդի վրա, նրա դարավար պայքարը իր ստեղծած նյութական և կուլտուրական բարիքներին տեր դասակարգում է հաջողությամբ:

Թուսաստանի շահագործող դասակարգերի հետ միասին ոչնչանում են նաև հայ շահագործող դասակարգերը, և մեր ժողովարքը մտնում է Սովետական Մեծ Ժողովրդի ընտանիքի մեջ, առնում է իր ձեռքը իր պետության և իր սեփական բախտը, դառնում է սեփականութեր իր ստեղծած նյութական և կուլտուրական բարիքների:

Սկզբում է հայոց լեզվի պատմության չորրորդ փուլը՝ սովետական փուլը, երբ գրական լեզուն դառնում է համաժողովրդական սեփականություն, դառնալով սովետական հայ լեռտականության լեզու: Այս փուլում բարբառները այլևս չեն հակադրվում գրական լեզվին որպես դասակարգացին լեզուներ, այլ դառնում են նրա անկատար տարբերակները, որոնք պատրաստ են տալու իրենց համար ընդհանուր դարձած գրական լեզվին իրենց կենսական հյութերը և տեղի տալու՝ մեռնելով կամ աստիճանաբար մոռացվելով հայ գրական լեզվով խոսող ողջ հասարակության կողմից: Այսպես լուծվում են այն հակասությունները, որոնք սկսվել են Հայաստանում գոյություն ունեցող լեզուների մեջ նախահայկական շրջանում և որոնք շարունակվեցին մինչև սոցիալիզմի օրերը, երբ այդ տարբեր լեզուները վերածվելով հայերենի տարբերակների՝ բարբառների, հանգեցին այն մեծ պինթեզին, որը կոչվեց սովետական հայերեն գրական լեզու:

Այսուհետև մեր գրական լեզուն պիտի ապրի որպես համաշխարհային, համամարդկային լեզվի մի տարբերակ, որ լուծվելու է համաշխարհային լեզվի մեջ մյուս բոլոր լեզուների հետ միասին:

Այսպես է լուծում սովետական հայագիտությունը հայոց լեզվի պատմության խնդիրները,<sup>1</sup> Դա չէ և չի կարող նման լինել հին հայագիտությանը, այլ, ինչպես տեսնում ենք, կազմում է նրա ուղղակի հակադրությունը:

4. Սովետական հայագիտությունը գրադվել է նաև բարբառների հարցով: Հակադրվելով հնգելքությանը, ըստ որի բարբառների առաջացումը դիտվում է որպես բարձրատիպ դասական լեզվի գեղքագացիացի արդյունք, սովետական հայագիտությունը, ենինիով էնգելլյան գրութից, հայ բարբառները դիտում է որպես նախահայկական առանձին ու անկախ ցեղական լեզուների վերապրուկներ, որոնք ապրում են անընդհատ միավորվելու և նմանվելու պրոցես: Երեսն են բերված լեզվական օրինաչափություններ, որոնք անկախ լեզվի հատկության նշաններ են, և այդ հիման վրա ոչ միայն հայտնագործվել է բարբառների մի նոր ճյուղ,<sup>2</sup> որ հարստացրեց Հ. Անապայանի կողմից կատարած հայ բարբառների գիտա-

<sup>1</sup> Ա. Ղարիբյան—Ներածություն հայոց լեզվիպատմության, 1932 թ., Ա. Ղարիբյան—Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն, Երևան, 1935, 1937 թ. թ. Ա. Ղարիբյան—Հայութեր հայոց լեզվի պատմությունից, 1945 թ. Ա. Ղարիբյան—Ներածություն հայոց լեզվի պատմությունին, 1928 թ. Ա. Ղարիբյան—Գրաբարի կազմավորումը. Հայկական ՍՍՌ ԳԱ. Տեղեկագիր № 5, 1945 թ. հայարակագիր. սերիա. Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի պատմությունների ժողովածու, հատ. 1:

<sup>2</sup> Ա. Ղարիբյան—Հայ բարբառների մի նոր ճյուղ. Հայկական ՍՍՌ Վ. Մ. Մոլոսովի անվան Գետական Համալսարանի գիտական աշխատավայրությունները: Հատ. XI, Երևան, 1939 թ.:

կան դասակարգումը,<sup>1</sup> այլև հնարավորություն ստեղծեց կատարելու հայքարանների հնչյունական դասակարգումը: Այդ դասակարգումը մի հաջող բանալի է հայ ժողովրդական լեզուների պատմությունը հասկանալու և գրելու համար:<sup>2</sup> Այդ դասակարգման արժեքները առանձնապես երեան կզանայն ժամանակ, երբ սովետական հայագիտությունը կծավալի հայքարանների և նրանց պատմության ուսումնասիրության աշխատանքները:

**Ծ.** Սովետական հայագիտությունը զբազվել է ոչ միայն հայոց լեզվի տեսական և պատմական հարցերով, այլև գործնական հարցերով: Եթե այդ ամենը, ինչ որ ասացինք, լեզվի պատմություն ու տեսություն էր և ուներ մի հիմնական նպատակ՝ հայերեն լեզվի մատերիալի վրա բազմաթիվ փաստերով հաստատելու պատմական մատերիալիզմի և գիտական մատերիալիզմի սկզբունքների անվիճելիությունն ու ճշգրտությունը, ապա սովետական հայագիտության աշխատանքները ուղղված էին նաև գործնականի կողմը, ենելով հենց իր տեսությունից:

Ուստի սովետական հայագիտության կարևոր նպատակներից մեկը եղել է՝ լուծել հայոց լեզվի առօրյա հարցերը, իր այդ տեսությունը կիրառել պրակտիկայում, արտադրության մեջ, իսկ լեզվաբանության արտադրությունը լեզվաշինարարության և գլոբուսական բնագավառներն են:

Տեսականորեն հիմնավորված հայոց լեզուն անհրաժեշտ էր գործնականութեան ուսուցանել գլոբուսներում, բայց այսպես, որ այդ ուսուցումը լինի ոչ միայն լեզվի ուսուցում, այլև ծառայի մանուկի սերնդի կոմունիստական դաստիարակության նպատակներին: Այդ նպատակին համնելու հումար անհրաժեշտ էր վերակառուցել նաև քերականության տեսությունը և գործնականը:

Հայ քերականագիտության մեջ իշխում էր Փորմալ հոգեբանական շկոլան, որը հանդիսանում էր հիմնականում գերմանական լեզվաբանության մեջ զարգացմատիզմի արտահայտությունը՝ քերականագիտության մեջ ընդհանուրապես: Այդ շկոլայի ներկայացուցիչն էր մեղ մոտ ակադեմիկոս Մ. Աբեղյանը, որի քերականագիտական հայացքները իշխում էին 1906 թվից մինչև 1932 թիվը: Սովետական հայագիտությունը, ենելով մարքսիզմի լենինիզմի փիլիսոփայական հիմունքներից և սովետական լեզվաբանության նվաճումներից, անհաջող պայքար ծավալեց այս ուղղության դեմ, հիմնավորեց ու հաստատեց ուսուական սովետական քերականագիտության ուղղությունը, որի ելակետները գիտական մատերիալիզմի սկզբունքներն էին: Այդ ուղղության տեսական հիմունքները մեղ մոտ մշակվեցին 32—40-ական թվականներին: Զմունամ հիշատակելու, որ այս հարցերում հիմնական դեր կատարողներից էր ընկեր Գ. Սևակը:<sup>3</sup> 1934 թվին, պայքարի ամենաբրուն շրջանում, լույս տեսավ հայոց լեզվի քերականության դասագիրքը,<sup>4</sup> մի երկու տարի հետո հայոց լեզվի շարանյուսության դասա-

<sup>1</sup> Ա. Դարիբյան—Համառոտություն հայ քարբառագիտության, Երևան, 1941թ.:

<sup>2</sup> Ա. Դարիբյան—Հայ քարբառագիտության պատմագրման ուղղությունը՝ Հայերեան ՍՍՌ կ. Մ. Մարտունի անվան Գևոտիկան Համալսարանի գիտական աշխատանքները, հատ. XIX:

<sup>3</sup> Գ. Սևակը—Մերունդների կուրսի քերականագիտության մեջ, Կուլտ. Փրոնտ. № 33, 34, 1934 թ. Գ. Սևակը—Հայոց լեզվի տեսություն, 1939 թ. Գ. Սևակը—Խորի մասերի ուսումնական գործառնությունները, Հայերեան ՍՍՌ կ. Մ. Մարտունի անվան Գևոտիկան Համալսարանի գիտական աշխատանքները, հատ. XI:

<sup>4</sup> Ա. Դարիբյան—Հայոց լեզվի քերականություն, Երևան, 1934 թ.:

զիքքը՝ որոնք մինչև հիմա մնում են մեր դպրոցական կայուն դասագըրքերը։ Այս դասագրքերի հիմնական ելակետներն էին.

ա) Առաքի և նախադասության տարրերակումը, որ ենում է մարգ-սյան այն սկզբունքից, որ իդուն իրական, գործուն գիտակցություն է:

բ) Նախադասության մեջ ենթական ու ստորոգյալը իբրև գլխավոր անդամներ ընդունելը, անդամներ, որոնք լեզվի մեջ դրսենորում են օրեկտիվ ռեալականություն հանդիսացող առարկայի և իր շարժման միասնական ըմբռնման գիտակցումը:

գ) Թոսքի մասերի և նախադասության անդամների տարրերակումը,  
իբրև ինպլական մտածողության բարձր ստագիայի՝ դիալեկտիկ ստագիայի  
արտահայտությունն:

Այս հարցերի տեսական պաշտպանությունը՝ հնարավորությունը տվեց լուծելու բազմաթիվ երկրորդական խնդիրներ, հայերենի հոլովակի խնդիրը, խոնարհման սիմսեմի խնդիրը, սաւական կառուցքածրի խնդիրը և այլն:


6. Թէ քերականական և թէ լեզվաբանական ուսումնական ու պատմական հարցերը պետք էր մասսայորին ծանոթացնել մեր ուսուցչությանը և դարձնել նրանց համար գործնական աշխատանքի ելակետներ, այլև պետք էր ցույց տալ նրանց՝ քերականության այդ նոր դրվածքի ուսուցման եղանակները դպրոցում։ Դա նշանակում էր լեզվաբանական նվաճումները կիրառել արտադրության մեջ։ Այդ պատճառով էլ սովորական հայագիտության աշխատողները զբաղվեցին նաև դպրոցի հարցերով, լեզվի ուսուցման հարցերով գպրոցներում ու մշակեցին հայոց լեզվի ավանդման սովորական մեթոդիկան,<sup>2</sup> և այնուղի ևս գերմանական ուղղությունը փոխարինելով ուսումնական սովորական ուղղությամբ։

Համեստ են սովորական հայագիտության նվաճումները, բայց համեստ թիվ են կազմում նաև նրա գոյության տարիները։ Սակայն սովորական հայագիտության մեծ նվաճումներն են այն կազմերը, որոնք այժմ նվիրված աշխատում են այդ գիտությունը մշակելու գործում։

Առաջնորդվելով Համաժմիութենական Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիայի կենտրոնական կոմիտեի պատմական որոշումներով իդեոլոգիական հարցերի մասին, հենվելով Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիայի կենտրոնական Կոմիտեի անսամբլ օգնության վրա, Հայաստանի հայագետները կշարունակեն իրենց անզիջող պայքարը իդեալիստական հայագիտության սկզբունքների դեմ, եվրոպական կուլտուրայի նկատմամբ գոյություն ունեցող ստորագրության դեմ, Էլ ավելի մեծ հռանդով կմշակեն սովորական հայագիտության տեսական հիմունքները, ժրաշան մեղվի պես կհավաքեն մեր կուլտուրայի բոլոր հարստությունները, կարժեքավորեն, կկապեն մեր հարեան ու եղբայրական ժողովուրդների կուլտուրայի հետ, կնեապօտեն և, առաջ մզելով, կտանեն սովորական հայագիտությունը դեպի նոր ու նոր նվաճութեան, դեպի գիտությունները:

<sup>2</sup> Գ. Սեւակ-Հայոց լեզվի շաբահյուսություն, Երևան, 1987 թ.

<sup>2</sup> Ա. Ապրիլյան - Հայոց լեզվի մեթոդիկա, 1938. թ., Մայբեմի լեզվի մեթոդիկա,  
1942 թ., Հայոց լեզվի մեթոդիկա, 1947 թ.:



ՀԱՄԱՉԱՆ  
ՀԱՐՄԱԴ ՄՅԱՆԻ  
ԳՐԲՈՒՅՑ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0231753

[104]

ЦЕНА

Задар

338

11-56

для тег-зубодра

2